



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 13/22**

10.09.2022թ.

ք. Երևան

ՀՀ ԱԺ պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին և 113-րդ հոդվածներին:

2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունն անցում կատարեց խորհրդարանական կառավարման համակարգի: Արդյունքում, առաջնային լեգիտիմություն ունեցող միակ մարմնի՝ խորհրդարանի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացումը ձեռք բերեց առանցքային նշանակություն, որի իրականացման համար էլ խորհրդարանին վերապահվեց համապատասխան գործիքակազմ:

Ազգային ժողովի՝ գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու գործառույթն ուղղակիորեն ամրագրված է 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասում: Միաժամանակ, Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման պահանջ: Ըստ Դիմողի՝ արդյունքում, իշխող խորհրդարանական ուժի և գործադիր իշխանության միջև ձևավորվում են սերտ կապեր, ինչը նշանակում է, որ քանի դեռ իշխող քաղաքական միավորը միասնական է, գործադիր իշխանության բարձրագույն մարմինը՝ կառավարությունը, անփոփոխելի է: Այս համատեքստում խորհրդարանական վերահսկողության արդյունավետ

իրականացումը և գործադիր իշխանության հավասարակշռումը մեծապես կախված է խորհրդարանական ընդդիմությունից:

Արդյունավետ խորհրդարանական վերահսկողության իրականացման համար առանցքային նշանակություն ունի կառավարության հաշվետվողականությունը Ազգային ժողովին: Ըստ այդմ, Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով խորհրդարանական խմբակցություններն օժտվել են գործադիր իշխանության գործունեության վերաբերյալ տեղեկությունների ստացման մի շարք գործիքակազմերով: Դրանց շարքում առանցքային գործիքներից է հարցապնդումների ինստիտուտը, որի միջոցով հնարավոր է դառնում կառավարությունից պահանջել և ստանալ խորհրդարանական վերահսկողության տեսանկյունից անհրաժեշտ տեղեկատվություն:

Դիմողը նշում է, որ հարցապնդումների իրավունքի քանակական սահմանափակումները չեն կարող հետապնդել ժողովրդավարական պետության մեջ որևէ լեգիտիմ նպատակ և ոչ այլ ինչ են, քան պառլամենտական փոքրամասնության կողմից խորհրդարանական վերահսկողության իրականացման հնարավորությունների արհեստական սահմանափակում: Բավարար է մատնանշել, որ հասարակությանը հուզող հարցերը, որոնք կարող են դառնալ հարցապնդումների առարկա, չեն կարող սահմանափակվել միայն մեկ ոլորտով, ուստի որևէ կերպ հիմնավորված և տրամաբանված չի կարելի համարել այն փաստը, որ հերթական նստաշրջանի ընթացքում մեկ խմբակցության կողմից հարցապնդումների իրավունքը եզակի կիրառում կարող է ունենալ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Կանոնակարգ) 121-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին և 113-րդ հոդվածներին:

Վիճարկվող նորմի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

Խմբակցությունը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ:

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:*

Սահմանադրության 113-րդ հոդվածի համաձայն՝

1. Ազգային ժողովի խմբակցություններն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք: Կառավարության անդամները հարցապնդմանը պատասխանում են այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում:

2. Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանը քննարկվում է: Եթե քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից ներկայացվում է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, ապա կիրառվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի դրույթները: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:

Այսպես, Սահմանադրությամբ ամրագրվել է, որ Ազգային ժողովի խմբակցություններն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք: Կառավարության անդամները հարցապնդմանը պատասխանում են այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում: Կանոնակարգը, մասնավորեցնելով նշված իրավունքը, սահմանել է, որ խմբակցությունը նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով կարող է դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ: Այսինքն՝ Կանոնակարգով սահմանափակվել է խմբակցությունների՝ հարցապնդումներով դիմելու իրավունքը:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է իրավունքների սահմանափակմանը և փաստել, որ ցանկացած իրավունքի սահմանափակում պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և համարժեք:

Անդրադառնալով իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե

այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Այսինքն՝ իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է ունենա լեգիտիմ նպատակ:

Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրվել են Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները, համաձայն որի՝ Ազգային ժողովը ներկայացուցչական մարմին է, այն վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Հաշվի առնելով, որ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, իսկ խմբակցության մեջ ընդգրկվում են միայն միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորները (Սահմանադրության 105-րդ հոդված), ապա ստացվում է, որ խմբակցությունը ներկայացնում է ժողովրդին: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովիրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Տվյալ դեպքում ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է պատգամավորների միջոցով, որոնք համախմբված են խմբակցությունների մեջ:

Սահմանադրության 112-րդ հոդվածը սահմանում է պատգամավորների՝ հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամներին բանավոր հարցեր տալու իրավունքը: Տվյալ դեպքում Սահմանադրությամբ հստակ նախատեսված է, որ պատգամավորները Կառավարության անդամներին բանավոր հարցեր տալու իրավունք ունեն հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում:

Իր հերթին, Սահմանադրության 113-րդ հոդվածով ամրագրված է Ազգային ժողովի խմբակցությունների՝ Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունքը: Համաձայն նշված հոդվածի 2-րդ մասի՝ հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանը քննարկվում է: Եթե քննարկման

արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից ներկայացվում է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, ապա կիրառվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի դրույթները: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:

Ստացվում է, որ Ազգային ժողովի խմբակցությունների՝ Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունքը օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության իրականացման՝ Սահմանադրորեն ամրագրված գործառույթ է: Ընդ որում, ի տարբերություն Սահմանադրության 112-րդ հոդվածի 1-ին մասի, որը հստակ նախատեսում է Կառավարության անդամներին բանավոր հարցեր տալու պատգամավորների իրավունքը հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից միայն մեկում, Սահմանադրության 113-րդ հոդվածը խմբակցությունների գրավոր հարցապնդումների իրավունքի սահմանափակում չի նախատեսում:

Սակայն Կանոնակարգը, սահմանափակելով այդ իրավունքը, նախատեսել է Խմբակցության՝ նույն հերթական նստաշրջանի ընթացքում Կառավարության անդամներին հարցապնդումով դիմելու հնարավորություն ոչ ավելի, քան մեկ անգամ:

Սահմանադրական դատարանն, անդրադառնալով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին, 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական իրավունքի տեսանկյունից իշխանությունը կամքը պարտադրելու իրավունք և կարողություն է: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական իշխանությունը, որպես ժողովրդի կամքը միջնորդավորված կերպով պարտադրելու իրավունք և կարողություն, պետության գործառնական կարևոր բաղադրատարրերից է, որն արտահայտվում է պետության կողմից իր առաքելությունը հրապարակային և ինքնիշխան ձևով իրականացնելու կարողունակությամբ՝ համապարտադիր վարքագծի կանոններ սահմանելու և դրանց կիրառումն ապահովելու միջոցով: Սահմանադրական մակարդակում հստակ տարբերակվում են «ժողովրդի իշխանություն» և «պետական իշխանություն» հասկացությունները: Ժողովրդավարական երկրներում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որը հանդիսանում է այդ իշխանության միակ կրողը և աղբյուրը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 2 հոդվածը սահմանում է, որ «Ժողովուրդն իր իշխանությունն

իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5 հոդվածների համալիր վերլուծությունից բխում է, որ պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ – ինստիտուտ – իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրորեն նախատեսված սահմանափակումների շրջանակներում: Այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը: Պետությունը պարտավոր է իրավական երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ պահանջն իրականացնելու և երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու ուղղությամբ:»:

ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է նաև օրենսդիր իշխանության՝ Ազգային ժողովի միջոցով: Ազգային ժողովը, հանդիսանալով ներկայացուցչական մարմին, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: Սահմանադրորեն երաշխավորված է Ազգային ժողովի խմբակցությունների՝ Կառավարության

անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունքը: Նշված իրավունքը սահմանադրորեն սահմանափակված չէ:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական պետություն է, ապա ժողովրդի ներկայացուցչական մարմինը պետք է ապահովված լինի իր կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ և նպատակային գործիքակազմով, որի ցանկացած սահմանափակում պետք է ունենա լեգիտիմ նպատակ և ծանրակշիռ հիմնավորում:

Այսպիսով, Ազգային ժողովի գործունեության կարգը սահմանվում է ոչ միայն Սահմանադրությամբ, այլ նաև Ազգային ժողովի կանոնակարգով, որն օրենք է: Սա նշանակում է, որ սահմանադրական կանոնակարգման շրջանակներում օրենսդիր մարմինն օժտված է նաև որոշակի հայեցողությամբ՝ սահմանելու իր գործունեության կարգը, որը, սակայն, պետք է բխի Սահմանադրաիրավական նորմերից և համապատասխանի դրանց: Գործող կարգավորումը չի բխում իրավական պետության նպատակներից և չի ապահովում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի անխոչընդոտ իրացումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 1-ին և 113-րդ հոդվածներին խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169